նութիւն կը կոչէ զՀայս։ Հայք նմա հաստ թիկունք կը լինին 'ի պատերազմունս ընդդէմ Փոլոկցի իշխանաց։ Պատերազմէն վերջը Թէոդոր հաշտեցած է զՀայս մնալ 'ի Ռուսաստան, շնորհելով շատ արտօնութիւններ։

Երբ այդ երկիրներուն կը տիրեն Լեհք, ըստ վկայութեան Փիտռ Կարմելիանի և Ղնտոնիի նոցա ևս վաւերացրնեն Հայոց առանձնաշնորհութիւնները։

1280 'ին Լեւոն Դանելովիչ Կալիցիոյ նախարարը զՀայս Թաթարաց հետ 'ի միասին օգնութեան կը կանչէ դրացի ազգաց հետ ունեցած պատերազմաց միջոց. և ապա մեծ հոդերով կը վարձատրէ զՀայս։ Անշուշտ Կամենիցէ 10 վերստ հեռաւորութեամբ գտնուած Արմեանէ և Արմեանքի գիւղերը՝ նոյն ատենէն այդ անունները կը կրեն։

Զարմա – դանի արշաւանօք բոլորովին քարուքանդ կը լինի Մնի, և նորա ոստանիկ բնակիչքն՝ « Թողլով զոսկէզօծ պալատս և զծաղկաւէտ դաշտըս, զվանորայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին՝ որպէս փախստական 'ի յԱխստղայ, որ է 'ի մէջ Հաշտարխանու և Ղազանու, ոմանք գնացին 'ի Ճուղայ, ոմանք 'ի Վան և այլք 'ի Սիս »։ Ախստրայի գաղթականութիւնը հոն ևս հանգստութիւն չգտանելով Թաթարաց ձեռքէն, « Յղեն 'ի Ղրիմ առ իշխանն Զինիւիզայ, որ բնակէր 'ի մէջ Ֆառանկ – Հիսարին Ֆէօդոսիու, ուստ դնեն ընդ իշխանին Ֆէօդոսիու, ելեալք 'ի յԱխստարայէ իշխանք և հասարակ ժողովուրդք վառեալք զինու, պատերազմելով ընդ Թաթարացն, ճեղքեալ գան 'ի Ղրիմ, և բնակին 'ի Ֆէօդոսիա։ Ի Կաղարաթ 1 և

1. Կաղարաթ Հայոց մեծ աւան եղած է Հին-Ղրիմու և Սուտաղի մէջ։